ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

7 սեպտեմբերի 2023 թվականի N 1520 - Լ

2023 ԹՎԱԿԱՆԻ ԽԱՂՈՂԻ ՄԹԵՐՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 146-րդ հոդվածի 2-րդ և 4-րդ մասերը և «Հայաստանի Հանրապետության 2023 թվականի պետական բյուջեի մասին» օրենքի 9-րդ հոդվածի 21-րդ մասը՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հաստատել 2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի կազմակերպման միջոցառումները՝ համաձայն հավելվածի:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝

1) Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի հետ համատեղ մշակել և սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության վարչապետի աշխատակազմ ներկայացնել «2023 թվականին խաղողի մթերումներ իրականացնող տնտեսավարողներին գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի շրջանակներում բյուջետային երաշխիքների տրամադրման կարգը հաստատելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը.

2) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Արարատի և Արմավիրի մարզպետների հետ համատեղ մշակել և հաստատել սույն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 3-րդ և 4-րդ ենթակետերի շրջանակներում սուբսիդավորման տրամադրման ընթացակարգը.

3) սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում հաստատել սույն որոշմամբ հաստատված միջոցառումների շրջանակներում խաղողի մթերման ընթացքի վերաբերյալ օպերատիվ տեղեկության հավաքագրման նպատակով մթերվող խաղողի քանակների փաստաթղթավորման և տեղեկության տրամադրման ընթացակարգը:

3. 2023 թվականի խաղողի մթերումների գործընթացի ընտրանքային մշտադիտարկումը մթերման կետերում կատարվում է մարզպետների աշխատակազմերի համակարգմամբ, որին կարող են ներգրավվել խաղողագործների միությունները:

4. Սույն որոշմամբ հաստատված հավելվածի 4-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերի շրջանակներում առաջացող ֆինանսական պարտավորությունները կիրականացվեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի փետրվարի 28-ի N 201-Լ որոշմամբ հաստատված Գյուղատնտեսական հումքի մթերումների (գնումների) նպատակով տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրի համար Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների, իսկ 4-րդ կետի 3-րդ, 4-րդ և 5-րդ ենթակետերի շրջանակներում առաջացող ֆինանսական պարտավորությունները՝ պետական բյուջեի միջոցների հաշվին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

Երևան

07.09.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ